ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլի 2017 թվականի N 80-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի ապրիլի 14-ի N 01/17.1/2308-17 հանձնարարականի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հարակից տարածքներում գտնվող շինությունների օրինականությունը ուսումնասիրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) ***Հակոբյան Երվանդ*** - աշխատանքային խմբի ղեկավար - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ,

2) ***Հակոբյան Արմեն*** - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ.

3) ***Ավետիսյան Եղիշե*** - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ,

4) ***Քալանթարյան Վարդան*** - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ:

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ *մինչև 2017 թվականի մայիսի 15-ը ներառյալ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ներկայացնել համապատասխան գեղեկանք:*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Գ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի ապրիլի 21
ք. Հրազդան